

Ի Մ՝ ՄՍ. Ս Ի Ս Ի Ն՝

Որպէս խոհուն ծերունի
Բազմած հսկայ գահին վըրայ անդունդի,
Զիւնի պարիսպն ըրած դղեակ քափանցիկ,
Կը դիտէ անցքը դարերու միայնակ:

Թիկունքն հովէն կ'առնէ անդուլ հարուածներ,
Ուր ժամանակն է չափուած,
Մինչ կը նայի նոր այգերու լուսածագ՝
Անցեալն հըպարտ՝ հին փառքերով կ'օրօրուի:

Իմ Մասիսն է յաւերժական հայրենիք,
Զերդ մարգարէ անբարբառ,
Սարսուռ ու սէր հագած, որպէս պատմունքան,
Վիհերու երգն ունի, պատգամ մեծութեան:

Մեր ապարանքն է լուսակերտ ու չֆնաղ,
Տանար մը լայն՝ գմբէթաւոր ու սլացիկ,
Ուր հայրերուս սիրտը կ'ապրի դարերով,
Երկինքին մօտ կապուտակ:

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂ

Հայրենի հող եւ հայրենի սրբուքիւն,
Մայր եւ դայեակ բանաստեղծի հանճարին,
Որ քու շունչէդ առնելով սէր, խնդուքիւն՝
Բաշխեց մեզի կաթոգին:

Ո՛վ հայրենի արեւ եւ կեանք կենսատարր,
Նահապետն ալ վեցետիկէն հեռաւոր՝
Ամբիծ հըմայֆդ ըզգաց եւ շունչդ հըրավառ՝
Սիրեց որպէս ուխտաւոր:

Հողին բոյրէն ան կը շնչէր ջերմօրէն
Անցեալի կեանքն ամբողջ, անուրջ դիւքական,
Ոգեւորուած Մասիսներու տեսիլէն՝
Կը պատմէր փառքն հայկական:

Սի՛րտ պանդուխտի, որ իտալեան փերէն
Կը սաւառներ դէպի Անիւն տարփագին,
Եւ ըզմայլած դիւցազներու փանթիւնէն
Կ'երգէր ծըփանքն Երագին:

Ո՛րվ հայրենիք, մայր գեղեցիկ անըման,
Մայր գոր սիրեց՝ իբր հոգւոյն ջինջ երկինք.
Հագիւ անցած այս աշխարհի նեղ սահմանն՝
Զինք պաշտեցին հայորդիք:

ԽԱՂԱՂ ՎԵՐՋՍԼՈՅՍ

Աշխարհս է, կ'ըսեն ինձ, կանանչ մարգ,
Զըւարթ արեւով ողողուած երագ.
Բայց ինչո՞ւ ցաւին հառաչն ու նըւագ՝
Գաղտնի կը դաւէ, լըռիկ հեզանագ:

Սիրտս յուշիկ յուշիկ՝ անձայն կը սպառի.
Մեղմ ու խուսափուկ լարով ներդաշնակ
Կը փորուի դամբանս... Երբ մարմինս ալ հիւծի՝
Պիտի գըրուի վրան... տննչանք անյատակ:

Կը ծընանին միշտ ու կը մահանան
Թաւիշ անուրջներ՝ շոյելով հոգին,
Յոյգեր մետաքսէ վայրկեան առ վայրկեան
Կ'երթան ու կու գան, եւ արագ կ'անցնին:

Անամպ հորիզոն՝ ժըպիտ, քաղցրութիւն՝
Քիչ անգամ միայն պարոյրով անդարձ
Կը հիւսեն մեր շուրջ տեսիլներ անհուն,
Երջանիկ կեանքի այգեր լուսաբաղձ:

Թող անցնի այսպէս ու գայ անգըրաւ,
Անանց երազին ոսկեղէն կամարն,
Որ հանգչիմ լոյսով, անկարօտ, անցաւ,
Բայց վերջալոյսով մը խաղաղ ու պայծառ:

Վ Ե Ր Ե Լ Ք

Գագաթ մ'ահա կը ձիւնանայ լոյսի պէս,
Սիրտն է բիւրեղ խորութիւն, ծով անափունք.
Ուր կը սուգուն ճառագայթները ամբիծ,
Այնչափ խորունկ՝ որչափ սէրն է խուսափուկ:

Բայց ովկիաններն անյատակ զինք կը կանչեն
Իրենց երգին ալեծրփուն ու հեւքոտ,
«Վալզերիան» է որ կը հնչէ անդունդէն,
Եւ ունկընդիբը լսկ՝ ինքն է մըրբկոտ:

Խորհուրդին դէմ անհորիզոն ու բարի,
Կը հսկէ լուռ փիլիսոփան շարունակ.
Ո՛չ քաղցրութիւն քարմագեղ գարունի,
Եւ ոչ ժըպիտ՝ իր սրտին չեն անուշակ:

Անծայր քռիչք մ'է իր բարձրութիւնը հըսկայ,
Որ կը ալանայ ու գահավեժ կ'իյնայ վար.
Հըպարտութեամբ զարնըած սէրը կու լայ,
Եւ դարերն ալ ետ կը դառնան հոգեվար:

Ապառաժներ են ալիքները սրտին,
Կիրքերն ինչպէս որ կը բախին ուժգնակի,
Ընդունայն տեղ կը ձգտի միշտ անհունին,
Եւ չի գիտեր թէ ովկիանն ալ ափ ունի:

Վաղանցուկ փառք մը ճակատէն կը հոսի,
Իմաստուն գայն կը կարծէ մարդն անցաւոր,
Մահը կու գայ ու կը պատմէ անցեալի
Երագն անգոյ, եւ պալատն իր լուսաւոր

Կ'իյնայ փըշուր ինքնիբ վրայ:

Հ. Մ. ՃԱՆԱՇԵԱՆ